Չորրորդ հաղորդում

Աստծու ժառանգներ

Գրվածքների ընթերցում. Գղտ 3:29, 4:7, Հռմ 8:17, Եփս 1:18, Տտս 3:7

I. Ժառանգը մարդ է, որն օրինական իրավունք ունի ժառանգելու մեկ ուրիշի սեփականությունը, ակտիվները կամ տիտղոսը նրա մահից հետո:

II. «Ժառանգ» բառի բառացի նշանակությունն է՝ «մեկը, ով նշանակված է ժառանգություն ստանալու»:

III. Հավատացյալները ժառանգներ են դառնում.

Ա. Քանի որ մենք նորոգվում ենք վերածննդի միջոցով՝ ստանալով աստվածային էությունը, մենք նաև Աստծու ժառանգներ ենք դարձվում, որոնք որակավորված են ժառանգելու Հայր Աստծու ունեցվածքը (Հռմ 4:14, 8:17, Գղտ 3:29, 4:7)՝ հավիտենական կյանքի հույսի համաձայն (Տտս 3:7):

Բ. Հավիտենական կյանքը, որը մեր վայելքն է այս դարաշրջանում և մեր հույսը գալիք դարաշրջանում, ոչ միայն այն բանի համար է, որ մենք այս դարաշրջանում ապրենք ու վայելենք Աստծուն, այլև գալիք դարաշրջանում և հավիտենությունում ժառանգենք այն ամենի ողջ հարստությունը, ինչ Աստված է մեզ համար. հետևաբար մենք ունենք հավիտենական կյանքի հույսը:

Գ. Այս հույսի համաձայն՝ մենք դարձվում ենք Աստծու ժառանգները, որպեսզի հավիտյան ժառանգենք Նրա ողջ հարստությունը:

IV. Աստվածաշնչում ժառանգը նա է, ով իրավացիորեն ստանում է սեփականությունը.

Ա. Աստծու ժառանգն Աստծուց խոստում կամ ժառանգություն ստացողն է, որը Քրիստոսի հանդեպ հավատքի միջոցով ծնվել է Նրա ընտանիքում:

Բ. «Աստծու ժառանգներ» արտահայտությունը խորհրդապատկերում է հավիտենական կյանքը, Աստծու թագավորությունը և հոգևոր օրհնությունները ժառանգելը, և Աստծու ժառանգները հաճախ նկարագրվում են որպես Քրիստոսի հետ ժառանգակիցներ:

Գ. Աստվածաշնչում ժառանգը նա է, ով ժառանգություն է ստանում, սովորաբար՝ որդի կամ նշանակված ազգական, որը սեփականության իրավունք է ստանում հոր ունեցվածքի, իրավունքների և պարտականությունների հանդեպ:

Դ. Հոգևոր առումով դա վերաբերում է հավատացյալներին, որոնք ծնվել են Աստծու ընտանիքում, որոնք, որպես Քրիստոսի ժառանգակիցներ, ստանում են փրկության, հավիտենական կյանքի և Աստծու թագավորության վերաբերյալ խոստումները:

V. Հետևյալ խոսքերն Աստվածաշնչի գլխավոր խոսքերն են «Աստծու ժառանգների» վերաբերյալ.

Ա. «Եթե զավակներ, ապա նաև ժառանգներ. մի կողմից՝ Աստծու ժառանգներ, մյուս կողմից՝ Քրիստոսի ժառանգակիցներ, եթե իրոք Նրա հետ տառապում ենք, որպեսզի Նրա հետ նաև փառավորված լինենք»՝ Հռմ 8:17.
   1. Սա ցույց է տալիս, որ ժառանգ լինելու համար նախապայման կա:
   2. Մենք պարզապես Աստծու զավակ լինելով չէ, որ ժառանգ ենք:
   3. Որպես զավակ ծնվելով՝ պետք է կյանքում աճենք, որպեսզի որդի դառնանք, և ապա պետք է տառապանքներ կրենք, որպեսզի փառավորվենք և օրինական ժառանգներ դառնանք:

Բ. «Դու.... որդի [ես]. իսկ եթե որդի, նաև ժառանգ՝ Աստծու միջոցով»՝ Գղտ 4:7.
   1. Նորկտակարանյան հավատացյալն այլևս օրենքի գործերի ստրուկ չէ, այլ կյանքում շնորհքի ներքո եղող որդի:
   2. Նորկտակարանյան հավատացյալները ոչ թե օրենքի կամ իրենց ըստ մսեղիի հոր միջոցով են Աստծու ժառանգները դառնում, այլ Աստծու, ընդ որում՝ Եռամեկ Աստծու միջոցով. Հոր միջոցով, ով Որդուն և Հոգուն ուղարկեց (խխ. 4, 6), Որդու միջոցով, ով որդիության համար փրկագնում կատարեց (խ. 5), և Հոգու միջոցով, ով մեր ներսում որդիությունն է իրականացնում (խ. 6):

Գ. «Իսկ եթե դուք Քրիստոսինն եք, ուրեմն Աբրահամի սերմն եք, խոստման համաձայն՝ ժառանգներ»՝ 3:29.
   1. Աբրահամի սերմը լինելու համար պետք է լինենք Քրիստոսինը, Քրիստոսի մի մասը:
   2. Քանի որ Քրիստոսի հետ մեկ ենք, մենք Աբրահամի սերմն ենք՝ խոստման համաձայն ժառանգներ, որոնք ժառանգում են Աստծու խոստացած օրհնությունը, այսինքն՝ համաբովանդակ Հոգուն՝ որպես պատրաստված Աստծու վերջնական ավարտունությանը, ով մեր բաժինն է:
   3. Նոր Կտակարանում հավատացյալները՝ որպես Աստծու ընտրյալ մարդիկ, չափահաս որդիներ լինելով, այդպիսի ժառանգներ են. նրանք ոչ թե օրենքի ներքո են, այլ Քրիստոսի մեջ են:

VI. Այժմ դիտարկենք հավատացյալների՝ որպես Աստծու ժառանգների կարգավիճակը.

Ա. Քրիստոսն ամեն բանի Ժառանգն է (Եբր 1:2), իսկ հավատացյալներին վիճակված է Քրիստոսի հետ ժառանգակիցներ լինել:

Բ. Փրկվելուց հետո մենք Աստծու զավակներ ենք, Աստծու որդիներ, աստվածային բնության հաղորդակիցներ և Աստծու ժառանգներ:

Գ. Երբ հասնենք աճի՝ Քրիստոսի հետ ժառանգակիցներ լինելու փուլին, մենք կփառավորվենք:

Դ. «Որպեսզի, Նրա շնորհքով արդարացված լինելով, ժառանգներ դառնանք՝ հավիտենական կյանքի հույսի համաձայն»՝ Տտս 3:7.
   1. Տտս 3:7-ում «ժառանգները» ոչ թե սոսկ որդիներ են, այլ ժառանգներ, որոնք որակավորված են Հոր ունեցվածքը ժառանգելու՝ Հռմ 4:14, 8:17, Գղտ 3:29, 4:7:

2. Այսպիսի ժառանգները (Հվի 1:12-13) ծնված են Աստծու հավիտենական կյանքից (3:16):

Ե. Հավատացյալներն Աստծու ժառանգներն են դարձել Քրիստոսի հարության մեջ վերածննդի միջոցով՝ 11:25.

1. Երբ Քրիստոսը հարուցանվեց, մենք բոլորս՝ Նրա հավատացյալներս, ներառված էինք Նրա մեջ. հետևաբար մենք հարուցանվեցինք Նրա հետ՝ Եփս 2:6:
2. Իր հարության մեջ Նա մեր մեջ ներդրեց աստվածային կյանքը և մեզ դարձրեց նույնը, ինչ Ինքն է, կյանքով և բնությամբ:
3. Սա Աստծու ժառանգներ դառնալու համար մեր վերածննդի հիմնական գործոնն է:

Զ. Իրենց կարգավիճակով Աստծու ժառանգներ լինելով՝ հավատացյալները լույսի մեջ բոլոր սրբերի հետ կիսում են Քրիստոսի մեջ մարմնավորված Եռամեկ Աստծուն՝ որպես իրենց բաժնի՝ Կող 1:12:

Է. Գրծ 26:18-ը խոսում է մեղքերի ներման և ժառանգության մասին՝ նրանց մեջ, ովքեր սրբացվել են Քրիստոսի հանդեպ եղած հավատքով:

Ը. Այս աստվածային ժառանգությունը Եռամեկ Աստված է՝ այն ամենով հանդերձ, ինչ Ինքն ունի, ինչ արել է և ինչ անելու է Իր փրկագնված մարդկանց համար:

Թ. Որպես Աստծու ժառանգներ՝ հավատացյալները նաև փառավորվելու են Քրիստոսի հետ՝ Հռմ 8:17բ.

1. Քրիստոսն այժմ փառքի մեջ է:
2. Ի վերջո մենք փառքի մեջ կբերվենք ու կփառավորվենք Քրիստոսի հետ:
3. Երբ փառավորվենք, նվաստության մեր մարմինը կայլակերպվի փառավոր մարմնի՝ Փլպ 3:21:
4. Կյանքը, որը մեր ներսում է որպես սերմ, փառքի կյանք է. դա Քրիստոսն է մեր մեջ՝ փառքի հույսը՝ Կող 1:27:
5. Երբ մենք տոգորված ու հագեցած լինենք փառքի տարրով, այդ փառքը դուրս կելնի մեզնից. ահա թե ինչ է նշանակում, որ մենք՝ Աստծու ժառանգներս, կփառավորվենք Քրիստոսի հետ:

Ժ. Հավատացյալների՝ աստվածային ժառանգությունը վայելելը կավարտունանա նրանց՝ Աստծու ժառանգությունը դարձվելով՝ Եփս 1:18.

1. Որպես Աստծու ժառանգներ՝ հավատացյալները Քրիստոսի հետ ժառանգակիցներ են հավիտենական կյանքի խոստման ու հույսի համաձայն, որ Քրիստոսի շնորհքով արդարացման և Քրիստոսի հարության մեջ վերածննդի միջոցով է:
2. Եփս 1:18-ը ցույց է տալիս, որ Աստծու ժառանգությունը սրբերի մեջ է:
3. Որպես նրանք, ովքեր Աստծու ժառանգությունն են, մենք ստացել ենք Սուրբ Հոգու կնիքը՝ խ. 13:

ԺԱ. Մենք գոհանում ենք Տիրոջից, որ Նա մեզ բերել է հավատացյալների՝ որպես Աստծու ժառանգների վերաբերյալ ճշմարտության խորությունների մեջ:

© 2026 Living Stream Ministry